STATE OF CALIFORNIA—HEALTH AND HUMAN SERVICES AGENCY
DEPARTMENT OF SOCIAL SERVICES
744 P Street • Sacramento, CA 95814 • *www.cdss.ca.gov*

KIM JOHNSON
DIRECTOR

GAVIN NEWSOM
GOVERNOR

Մարտի 16, 2020թ.

ՈՒՄ՝ ՏՆԱՅԻՆ ԱՋԱԿՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՑՈՂՆԵՐԻՆ

ԹԵՄԱ՝ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 2019Թ. ԿՈՐՈՆՈՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (ԿՈՎԻԴ-19) ՄԱՍԻՆ ՏՆԱՅԻՆ ԱՋԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այս նամակը ուղարկվում է տնային աջակցման ծառայություններ ստացողներին (IHSS)՝ 2019 թ-ի կորոնովիրուսային հիվանդության (ԿՈՎԻԴ-19) մասին լրացուցիչ տեղեկություններ հաղորդելու նպատակով:

Դուք ստանում եք այս նամակը, քանի որ, հնարավոր է, պատկանում եք այն մարդկանց խմբերից մեկին, որոնց Կալիֆորնիայի նահանգապետը կոչ է արել մեկուսանալ ձեր տներում՝ հիվանդանալուց խուսափելու համար:

ԿՈՎԻԴ-19-ը կարող է առաջացնել թեթևից մինչև միջին ծանրության շնչառական հիվանդություն: Ախտանշանները շատ նման են գրիպի, այդ թվում՝ ջերմություն, հազ և/կամ հևոց:

Դուք կարող եք ինքներդ ձեզ պաշտպանել՝

- Հաճախ լվանալով ձեր ձեռքերը օճառով և ջրով առնվազն 20 վայրկյան, հատկապես խնչելուց, հազալուց, փռշտալուց կամ հասարակական վայրում գտնվելուց հետո:
- Խուսափելով անլվա ձեռքերով կպնել ձեր աչքերը, քիթը կամ բերանը:
- Խուսափելով սերտ շփումներից այն մարդկանց հետ, ովքեր հիվանդ են:
- Հեռու մնալով հանրային վայրերից, եթե դուք հիվանդանում եք և ունեք բարձր ջերմություն, հազ կամ շնչառական ախտանիշներ:
- Վերացնելով կամ նվազագույնի հասցնելով այցելուների թիվը:
- Խրախուսելով ձեր IHSS-ի մատակարարին հիվանդանալու դեպքում օգտվեն իրենց հասանելիք հիվանդության արձակուրդից: Ձեր մատակարարը կարող է գտնել իրեն հասանելիք հիվանդության արձակուրդի ժամաքանակը վճարման կտրոնի մեջ:

Եթե ձեր IHSS-ի մատակարարը հիվանդանում է կամ ունի վերև նշված ախտանիշները, ապա դուք պետք է դիմեք վարչաշրջանի տեղային սոցիալական ծառայությունների գրասենյակը կամ պետական մարմնին՝ այլ մատակարար որոնման աջակցության հարցում օգնելու համար:

Եթե կարծում եք, որ դուք հիվանդ եք կամ ունեք ԿՈՎԻԴ-19 ախտանշաններ, դուք կապ եք ունեցել ԿՈՎԻԴ-19-ով հիվանդի հետ, կամ վերջերս ճանապարհորդել եք այն երկրներ, որտեղ ԿՈՎԻԴ-19-ը լայն տարածված է, դուք պետք է դիմեք ձեր բժշկին:

Խնդրում ենք հաշվի առնել, որ IHSS-ի ձեր սոցիալական աշխատողը կամ վարչաշրջանի գրասենյակը կարող են կապվել ձեզ այս ընթացքում՝ ստուգելու ձեր առողջական վիճակը համոզվելու համար, որ դուք ստանում եք ձեր IHSS-ի ծառայությունները: Եթե ձեր բուժող բժիշկը ձեզ այլ հրահանգներ չի տվել, կարևոր է, որ դուք թույլ տաք ձեր բուժող բժշկին՝ շարունակել ձեզ տրամադրել IHSS ծառայություններ: Բացի այդ, եթե դուք ունեք պլանավորված այց, խնդրում ենք թույլ տալ, որ ձեր սոցիալական աշխատողը մուտք գործի ձեր տուն, ձեր կարիքները գնահատելու նպատակով, եթե նրանք հիվանդության նշաններ չունեն:

Նահանգը և վարչաշրջանը ջանասիրաբար աշխատում են՝ ձեր անվտանգությունն ու առողջությունը ձեր տանն ապահովելու համար: Խնդրում ենք հետևել այս նամակում նկարագրված ցուցումներին և հիվանդանալուց խուսափելու համար լվանալ ձեր ձեռքերը առնվազն 20 վայրկյան, չդիպչել ձեր դեմքը և հետևել այլ հավաքների կամ միջոցառումների վերաբերյալ հանրային առողջության մասին ցուցումներին:

Լրացուցիչ տեղեկությունների համար, տե՛ս Կալիֆորնիայի Հանրային առողջապահություն դեպարտամենտի (California Department of Public Health, CDPH) տեղեկատվությունը բարձր ռիսկային խմբերի վերաբերյալ:

Խնդրում ենք նաև դիտել CDPH-ի կայքը՝ ԿՈՎԻԴ-19-ի մասին ավելի ընդհանուր տեղեկություններ ստանալու համար: